ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դվին համայնք
+(374)235 6-00-67, Dvingp@inbox.ru dvin.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 26» դեկտեմբերի 2017 թվականի թիվ 37

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 26 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 13–ՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Ղեկավարվելով " Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ և 6-րդ կետերով .

համայնքի ավագանին որոշում է .

Հաստատել Դվին համայնքի 2017 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 13_րդ նիստի օրակարգը համաձայն հավելվածի

Համայնքի ավագանու անդամներ	*Կողմ՝*	*Դեմ՝*	*Ձեռնպահ՝*
Վ.Դերմոյան			
Կ.Դավթյան			
Ա.Գրիգորյան			
Հ.Նազարյան			
Գ.Բաբեղամյան			

Համայնքի ղեկավար՝ Ա. Աբրահամյան

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Դվին համայնքի ավագանու
2017 թվականի դեկտեմբերի 26
թիվ 37որոշման

ՕՐԱԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ 13-ՐԴ ՆԻՍՏԻ

1.ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 15 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 34 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՏ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ. ՝Ա. Աբրահամյանը

2.2018 ԹՎԱԿԱՆԻ ԴՎԻՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԻ, ԹՎԱՔԱՆԱԿՆԵՐԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Զեկ. ՝Ա.Աբրահամյան

3.2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Զեկ. ՝Ա.Աբրահամյան

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դվին համայնք
+(374)235 6-00-67, Dvingp@inbox.ru dvin.ararat@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«26» դեկտեմբերի 2017 թվականի թիվ 38_Ն

ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 15 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 34 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Իրավական ակտերի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Արարատի մարզպետարանի՝ 20 Դեկտեմբերի 2017 թվականի թիվ 1/14/1/8040-17 գրությունը

Ավագանին որոշում է՝

Համայնքի ավագանու՝ 15 դեկտեմբերի 2017 թվականի՝ թիվ 34 որոշման թվագրում <<34>> թիվը կարդալ <<34-Ն>> :

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ բաժնի 6 կետում ավելացնել հետևյալ նախադասությունները

1. Աղբահանության վճարի հաշվարկը կատարվում է ելնելով շ ենքի կամ շինության գործառնական նշանակությունից, ընդորում՝

1) բնակելի նշանակության շենքերի կամ շինությունների համար՝ փաստացի բնակվող անձերի քանակով,

2) Ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 15 դրամ:

:

2.Համայնքում առկա ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և /կամ/ շինություններում , այդ թվում՝ հասարակական , հանրային , ծառայությունների մատուցման, արտադրական , արդյունաբերական շենքերում և շինություններում աղբահանության վճարը սահմանվում է ըստ շինության ընդհանուր մակերեսի հետևյալ դրույքաչափերով.

1)առևտրի /այդ թվում՝ շուկաների/, հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայությունների իրականացվող շինությունների մասով մեկ քառակուսի մետր մակերեսի համար 50 դրամ,

2) հյուրանոցների և հյուրանոցային տնտեսության ծառայություններ, ինչպես նաև այլ գործողություն իրականացնող հասարակական շինությունների մասով՝ 1 քառակուսի մետր - 30 դրամ.

3) արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով՝ 1 քմ - 8 դրամ .

4) կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով՝ 1 քառակուսի մետր - 4 դրամ .

5) շինություններում, որտեղ իրականացվում է մեկից ավելի բազմաբնույթ տնտեսական գործունեություն, աղբահանության վճարն ամբողջությամբ հաշվարկվում է առավել բարձր դրույքաչափով:

Ավագանի՝

Համայնքի ավագանու անդամներ	*Կողմ՝*	*Դեմ՝*	*Ձեռնպահ՝*
Կ.Դավթյան			
Վ.Դերմոյան			
Ա.Գրիգորյան			
Գ.Բարեղամյան			
Հ.Նազարյան			

Համայնքի ղեկավար՝ Ա. Աբրահամյան

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դվին համայնք
+(374)235 6-00-67, Dvingp@inbox.ru dvin.ararat@mta.gov.am

N

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 26 » դեկտեմբեր 2017 թվականի N 39-Ն

2018 ԹՎԱԿԱՆԻ ԴՎԻՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԻ, ԹՎԱՔԱՆԱԿՆԵՐԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հարապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասին 28-րդ կետի, 35-րդ հոդվածի 1-ին մասին 7-րդ կետի

համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել համայնքապետարանի աշխատակազմի, և մանկապարտեզի աշխատողների հաստիքացուցակները, թվաքանակը և դրույքաչափերը:

Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ա Պ Ե Տ Ա Ր Ա Ն

1.	Համայնքի ղեկավար	– 280000 դրամ
2.	Տեղակալ	1 միավոր _ 160000 դրամ
3.	Քարտուղար	-1 միավոր – 224000 դրամ
4.	Գլխ. մասնագետ	-1 միավոր – 223000 դրամ
5.	Առաջատար մասն.	-1 միավոր – 138000 դրամ
6.	Առաջատար մասն.	-1 միավոր – 138000 դրամ
7.	1-ին կարգի մասն.	-1 միավոր – 136000 դրամ
8.	2-րդ կարգի մասն.	-1 միավոր – 128000 դրամ
9.	Հարկահավաք.	-1 միավոր – 128000 դրամ
10.	Հավաքարար	-1 միավոր – 83000 դրամ
11.	Մշակույթի տան վարիչ	-1 միավոր – 87000 դրամ
12.	Գեղմասվար	-1 միավոր – 77000

13. Գրադարանավարուհի -1 միավոր – 86000 դ

Ընդամենը 1 888000 /մեկ միլիոն ութ հարյուր ութսունութ հազար/ դրամ

ԴՎԻՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ

1	Վարիչ	140000 դրամ
2	Դաստիարակ	124000 դրամ
3	Դաստիարակ	124000 դրամ
4	Դայակ	75000 դրամ
5	Դայակ	80000 դրամ
6	Հաշվապահ/գործավար/	104000 դրամ
7.	Խոհարար	76000 դրամ
8.	Խոհարարի տեղակալ	80000 դրամ
9	Երաժշտական դաստիարակ /գանձապահ/	80000 դրամ
10.	Օժանդակ բանվոր	80000 դրամ
11.	Պահակ	75000 դրամ
13.	Բուժքույր	80000 դրամ
14.	Տնտեսվար	80000 դրամ

Ընդամենը՝ 1 198 000 /մեկ միլիոն հարյուր իննսունութ հազար/ դրամ:

Համայնքի ավագանու անդամներ	*Կողմ՝*	*Դեմ՝*	*Ձեռնպահ՝*
Կ.Դավթյան			
Վ.Դերմոյան			
Գ.Բարեղամյան			
Ա.Գրիգորյան			
Հ.Նազարյան			

Համայնքի ղեկավար՝ *Ա.Աբրահամյան*

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դվին համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դվին, +(374)235 6-00-67, Dvingp@inbox.ru dvin.ararat@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

« 26 » դեկտեմբեր 2017թվականի N 40-Ն

2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հարապետության օրենքի 18րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել 2018թվականի բյուջեի նախագիծը՝

եկամուտների՝ ընդհանուր գումարը կազմում է 70758.1 հազ. դրամ

1. Հարկեր և տուրքեր - 15423.0 հազ. դրամ
2. Պաշտոնական դրամաշնորհ/դոտացիա/ - 45095.1 հազ. դրամ
3. Այլ եկամուտներ - 10240.0 հազ. դրամ

Զեկուցողը նշեց , որ ծախսային մասն նույնպես կազմում է 70758.1 հազ. դրամ:

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ – 30158.0 հազ.դրամ

Հոդված 4111 – Համայնքապետարանի աշխատողների աշխատավարձ -23760.0 հազ.դրամ:

Աշխատավարձը հաշվարկված է համայնքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակների հիման վրա:

Հաստիքային միավորների թիվը կազմում է 13 միավոր: Ամսական աշխատավարձը կազմում է 1888.0 հազ. դրամ: Ընդամենը 1888.0 * 12 = 22656.0 հազ. դրամ: Արձակուրդայինի տարբերությունը և հավելավճարը /72.0*12=864.0/գումարելով կստացվի 23760.0 հազ. դրամ:

Հոդված 4112 Պարգևատրում- 1888.0 հազար դրամ:

Ծախսը նախատեսված է պարգևատրման համար-1888.0հազ դրամ

Հոդված 4212 – Էներգետիկ ծառայություններ - 1400.0 հազ. դրամ:

Ծախսը նախատեսվում է համայնքապետարանի էներգամատակարարման և գազամատակարարման /ջեռուցման/ համար՝ համաձայն փոխադարձ ակտերի, որը կազմում է - 1400.0 հազ. դրամ:

Էներգամատակարարում -800.0 դրամ

Գազամատակարարում -600.0 դրամ

Հոդված 4213 – Կոմունալ ծառ./ջրամատակար. և դեռատիզացիա/ - ՝ 220.0 հազ. դրամ:

Ծախսը նախատեսվում է

1.ջրամատակարարման համար /ջրմուղից օգտվելու համար, համաձայն փոխադարձ ակտի/: Ծախսը կազմում է - 184.0 հազ. դրամ :

2. Դեռատիզացիա 36.0 հազ. դրամ,

Ընդ 220.0 հազար դրամ:

Հոդված 4214 – Կապի ծառայություն - 380.0.0 հազ. դրամ:

Ծախսը նախատեսված է հեռախոսների աբոնենտային և խոսակցական ծախսերի համար՝ համաձայն փոխադարձ ակտի :

Հեռախոսի ծախս՝ 150.0հազ. դրամ

Ինտեռնետ՝ 230.0 հազ. դրամ:

Ընդ. 370.0հազ.դրամ

Հոդված 4215 - Ապահովագրական ծախսեր - 30.0 հազ. դրամ

Ծախսը նախատեսվում է համայնքապետարանի ծառայողական ավտոմեքենայի ապահովագրման համար, որը կազմում է 30.0 հազ. դրամ:

Հոդված 4221 – Ներքին գործուղում - 30.0 հազ. դրամ:

Ծախսը նախատեսվում է համայնքապետարանի աշխատակիցների գործուղման ծախսերի համար: Ծախսը կազմում է - 30.0 հազ. դրամ:

ոդված 4232 – Համ.ծառայություն - 120.0 հազ. դրամ

Ծախսը նախատեսվում է համակարգչում իրավական ակտերի և նոր ծրագրերի տեղադրման համար:

1.Տեղեկատվական կենտրոն-120.0դրամ

Հոդված 4234 – Տեղեկատվական ծառայություն - 350.0 հազ. դրամ:

Ծախսը նախատեսվում է Արտաշատ, Արարատ, Հայաստանի Հանրապետություն և 02 շաբաթաթերթին,գործք ամսագրի բաժանորդագրման համար, որը կազմում է -350.0 հազ. դրամ

Հոդված 4252-Մեքեն.և սարքավորումների վերանորոգում 200.0 հազ դրամ

Ծախսը նախատեսված է համակարգիչների.քարթրիչների, պատճենահանման և այլ սարքերի վերանորոգման համար,որը կազմում է 200.0 հազ դրամ.

Հոդված 4261 – Գրասենյակային նյութեր - 400.0 հազ. դրամ:

Ծախսը նախատեսվում է վարչական նյութերի /գրասենյակային պիտույքներ/ ձեռք բերման համար, որը կազմում է - 400.0 հազ. դրամ:

Հոդված 4264 – Տրանսպորտային նյութեր - 1000.0 հազ. դրամ

Ծախսը նախատեսվում է համայնքապետարանի ծառայողական մեքենայի վառելիքի ձեռք բերման համար:

Ավտոպահեստամասեր՝ - 500.0 հազ. դրամ

Բենզին - 500.0 հազ. դրամ

Ընդ. 1000.0 հազ.դրամ

Հոդված 4267– Կենցաղային նյութեր - 150.0 հազ. դրամ

Նախատեսված է համայնքապետարանի կենցաղային /մաքրիչ նյութեր/ և տնտեսական ապրանքների գնման համար:

Կենցաղային –70.0 հազ. դրամ

Տնտեսական – 80.0 հազ. դրամ

Հոդված 4269 –Հատուկ նպատակային այլ ապրանքներ – 220.0հազ դրամ.

Ծախսը նախատեսված է գրքեր և վարագույրներ գնելու համար.

Գրքեր-80.0դրամ

Վարագույրներ-140.0դրամ

Հոդված 4823-Պարտադիր վճարներ -10.0 հազ.դրամ

Ծախսը նախատեսված է ծառայողական ավտոմեքենայի տեխնիկական զննման համար

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ – 20685.0 հազ. դրամ

Հոդված 4239 – Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ - 20685.0 հազ. դրամ

Ծախսը նախատեսվում է համայնքի մանկապարտեզի կարիքների համար:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ – 1900.0 հազ. դրամ

Հոդված 4239 – Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ – 1000.0 հազ. դրամ

Ծախսը նախատեսված է մշակութային միջոցառումներ/համերգների և թատրոնի տոմսեր գնելու/ կազմակերպելու համար, որը կազմում է 1000.0 հազ. դրամ՝ համաձայն մշակութային ծրագրի:

Միջոցառում-800.0

Տոմսեր-200.0

Հոդված 4269 – Հատուկ նպատակային այլ ապրանքներ – 900.0 հազ. դրամ

Ծախսը նախատեսված է մշակութային միջոցառումներ կազմակերպելու համար անհրաժեշտ ապրանքների գնման համար՝ համաձայն մշակութային ծրագրի որը կազմում է 900.0 հազ. դրամ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ - 1500.0 հազ. դրամ

Հոդված 4212 – էներգետիկ ծառայություն - 1200.0 հազ. դրամ

Ծախսը նախատեսվում է փողոցների լուսավորության էլ.էներգիայի մատակարարման համար.

Հոդված 4251 –Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում - 300.0հազ. դրամ

Ծախսը նախատեսված է արտաքին լուսավորության ցանցի շահագործման և լուսավորության պարագաներ ձեռք բերելու համար:

ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՈՒՄ – 5000.0 հազ. դրամ

Հոդված 4213 Կոմունալ ծառայություն - 5000.0 հազ. դրամ

Ծախսը նախատեսվում է համայնքում աղբահանություն իրականացնելու համար՝ համաձայն պայմանագրի:

ՄԱՅՐՈՒՂԻՆԵՐԻ ԵՎ ՓՈՂՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ ԵՎ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ - 900.0հազ. դրամ

Հոդված 4251 –Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում - 900.0հազ. դրամ

Ծախսը նախատեսվում է համայնքի փողոցների հարթեցման և ավազակոպճապատման համար:

ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԵՏ. – 230.0 հազ. դրամ

Հոդված 4819 –Նվիրատվություն այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին-30.0 հազ.դրամ

Ծախսը նախատեսված է ''Համայնքների միությանը'' փոխանցելու համար

Հոդված 4241-Մասնագիտական ծառայություն-200.0հազ.դրամ

Ծախսը նախատեսված է վկայականների ձեռք բերման համար.

ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԱՆՁԱՆՑ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ – 3700.0հազ.դրամ

Հոդված 4726 – Հուղարկավորության նպաստներ բյուջեից - 900.0 հազ. դրամ

Ծախսը նախատեսվում է հարազատին կորցրած անձանց ֆինանսական աջակցություն ցուցաբերելու համար:

Հոդված 4729 - Այլ նպաստներ բյուջեից - 2800.0 հազ. դրամ

Ծախսը նախատեսված է անապահով ընտանիքներին ֆինանսական աջակցություն ցուցաբերելու համար:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ – 300.0 հազ. դրամ

Հոդված 4819 – Նվիրատվություն այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին – 300.0 հազ. դրամ:

Ծախսը նախատեսված է հասարակական կազմակերպություններին ֆինանսական աջակցություն ցուցաբերելու համար:

ՀԱՆԳԻՍՏ,ՄՇԱԿՈՒՅԹ և ԿՐՈՆ-150.0հազ.դրամ

Հոդված 4639 – Այլ ընթացիկ դրամաշնորհներ-150.0հազ.դրամ

Ծախսը նախատեսված է Դվինի եկեղեցուն ֆինանսական աջակցություն ցուցաբերելու համար

ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ-300.0հազ.դրամ

Հոդված4239- Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ-300.0հազ.դրամ

Ծախսը նախատեսված է հակակարկտային կայանին փոխանցելու համար

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ -300.0հազ.դրամ

Հոդված 4639- Ծախսը նախատեսված է համայնքի բուժ.կետին ֆինանսական աջակցություն ցուցաբերելու համար:

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ-600.0 հազ.դրամ

Հոդված 4269-Հատուկ նպատակային այլ ապրանքներ-600.0 հազ դրամ

Ծախսը նախատեսված է առաջին դասարանցիներին և շրջանավարտներին նվերների համար.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ -300.0հազ.դրամ

Հոդված 4639-Այլ ընթացիկ դրամաշնորհներ

Ծախսը նախատեսված է տնաշինական ծրագրի կատարմանը ներդրում կատարելու համար.

ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ – 4735.1հազ. դրամ

Հոդված4819-Վարչական բյուջեի պահուստային միջոցներ-4735.1 հազ.դրամ

Ավագանի՝

Համայնքի ավագանու անդամներ	*Կողմ՝*	*Դեմ՝*	*Ձեռնպահ՝*
Կ.Դավթյան			
Վ.Դերմոյան			
Գ.Բարեղամյան			
Ա.Գրիգորյան			
Հ.Նազարյան			

Համայնքի ղեկավար *Ա.Աբրահամյան*